

ԱՐՏԱԿ ՄԱՂԱԹՄ

## ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՄԱՐԻ ԲՐՈՍՍԵ

«Յեղ Մեն-Մարտենի՝ հայկական լեզուի ուսմանը  
պարասող և շարունակող եղաւ Բրոսսե»:  
(Գուսպալ Աղուֆ Շրումպֆ)

Վերջերս «Զանգակ-97» հրապարակչությունը լույս է ընծայել պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Մեսրոպ Մաշտոցի մրցանակի դափնեկիր Պարույր Մուրադյանի կազմած և խմբագրած «Ավադեմիկոս Մարի Բրոսսե» հոդվածների ժողովածուն, որը նվիրված է ականավոր հայագետ-վրացագետ ակադ. Մարի Ֆելիսիպե Բրոսսեի (1802՝ Փարիզ, 1880՝ Շաթեռլո) ծննդյան 200-ամյակին: Ի դեպ, վերջերս լրացավ նաև գրքի խմբագիր, հայագիտության անխռնջ մշակ Պ. Մուրադյանի ծննդյան 70-ամյակը: Ֆրանսիացի գիտնական Մարի Բրոսսեն չափազանց մեծ ծառայություններ է մատուցել և՛ Հայաստանի, և՛ Վրաստանի պատմագիտությանը՝ իբրև միջնադարյան պատմական երկասիրությունների թարգմանիչ ու մեկնաբան, որն իր հայրենիքում և Ռուսաստանում հրապարակել է շուրջ 270 մեծարժեք աշխատություն:

Ժողովածուն, որը պալագրվել է ՆՇ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ, բացվում է պոեմ. Պ. Մուրադյանի «Հայագիտության պատմության կարևոր հանգրվան» ներածական հոդվածով, որտեղ հեղինակը գրում է. «Հունարենից և լատիներենից բացի եբրայերեն, արաբերեն, չինարեն և մի քանի արևելյան այլ լեզուների հմտացած Մարի Բրոսսեն Մեն-Մարտենը ներշնչեց նախ հայերեն ուսանել, ապա անցնել վրացերենին, Վրաստանի պատմության համար դիմելով հայոց պատմիչների վկայություններին»: Մեկ այլ տեղում, արժեվորելով ֆրանսիացի մեծանուն գիտնականի կատարած հսկայածավալ աշխատանքը՝ պոեմ. Պ. Մուրադյանը նշում է. «Ավելորդ չէ նկատել, թե Մ. Բրոսսեն ու նրա ժամանակակիցները խնդիր չունեին բնագրերի քննական հրապարակություններ կատարել: Ձեռագրական հավաքածուների նկարագրությունների բացակայությունը, ինչպես նաև նրանց ցանուցությունը, չհաշված հրապարակիչների պատրաստության աստիճանը, այդ հնարավորությունը չէին տալիս: Բայց որ նրանք հայագիտության կառույցի ուրվագծողներն ու տեղորոշողները եղան՝ կասկածից դուրս է» (ընդգծումը մերն է - Ա. Մ.):

Վերոհիշյալ հոդվածին հաջորդում է Մ. Բրոսսեի ուսուցիչ, ֆրանսիացի ականավոր հայագետ Մեն-Մարտենի (1971, Փարիզ - 1832, Փարիզ)՝ ակադեմիկոս Ալեքսանդր Հումբոլդտին ուղղված նամակը, գրված 1831 թ. դեկտեմբերի 22-ին, Փարիզում, իր անժամանակ մահից ոչ շատ առաջ: Սույն փոքրիկ նամակում Մեն-Մարտենը գրում է իր ծրագրերի մասին, որոնց շարունակողներից մեկը եղավ Մ. Բրոսսեն:

Չափազանց կարևոր նշանակություն ունի նաև գրքում զետեղված Գուսպալ Աղուֆ Շրումպֆի (1844, Օբերհաուսերգեն - 1892, Լոնդոն) և Ն. Գաբեգին Զարբհանայանի

(1827, Կ. Պոլիս - 1901, Վենետիկ) «Մարի Ֆելիսիպե Բրոսսե» հոդվածը, որի հեղինակները մեջքերել են գիտնականի որդու՝ Լորան Բրոսսեի մասնավոր խմբագրությամբ հրապարակված «Bibliographie Analytique des ouvrages de M. F. Brosset» (St - Pb., 1887) գրքի հետևյալ խոսքերը. «Նարկ սեպուեցալ յիշեցնել թե Բրոսսե ոչ պարամիչ մ'էր և ոչ լեզուագէտ: Բոլորովին հեռի ի տղարութենէ՝ ընծայելոյ իրեն ինչ որ չունէր, Բրոսսե ոչ երբէք պահանջած է ըլլալ ոչ մին և ոչ միւսը, բառին բուն նշանակութեամբ: Խրթին ու վերացեալ ուսմանց եռանդուն սիրող, անխոնջ ու համբերող հետաւոր, բաւական սեպեց նուիրել իր կեանքը պարմութեան նիւթեր հաւաքելու, ու այդ ուսմանց երկիրը մաքրել պարմական հետախուզութեամբք, անոնց օգտին ու պիտոյից ծառայեցնելով նաև զբանասիրութիւն: Երոտայի հալազէտք գիտեն թէ որչափ օգտակար եղած է իրենց ուսմանց իր ջանքովը պարտաստուած այսպիսի ճոխ ժառանգութիւն մը» (էջ 22-23):

Սույն հոդվածը, որպէս արված է նաև ֆրանսիացի ձեռագրագետ աղբյուրագետի հայագիտական ուսումնասիրությունների ցուցակը (61 աշխատություն), վերցված է հեղինակների «Ուսումնասիրությունք հայ լեզուի և մարենագրութեան յԱրեւմուտս (ԺՂ-ԺԹ դար)» գրքից (Վենետիկ, 1895):

Ժողովածուն եզրափակվում է ակնավոր հայագետ Նիկողայոս Մառի (1864, Զուրաբ-յիս - 1934, Լենինգրադ) «К столетию дня рождения М. Brosse» հոդվածով, որն արարարվում է «Записки восточного отделения русского археологического общества» հանդեսից (СПБ, 1902, т. XIV, стр. 73-78):

Վերջում նշենք նաև, որ մեծ գիտնականի ծննդյան 200-ամյակին նվիրված սույն արժեքավոր ժողովածուն հրապարակվել է «Արմեն և Բերսարե Ծերեճեան հիմնադրամի» (ԱՄՆ) հովանավորությամբ: